Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025- ԵԱ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան -1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 – 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 – 31.06.2025թթ |
| Ներկայացման օր | 07.07.2025 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունների համակարգող |

## 2. **Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 178 շահառուի Նոր Նորք, Ավան. Նուբարաշեն. Արաբկիր եւ Քանաքեռ- Զեյթուն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 27 դեպքի վարում (24 վերափաստագրում. 3 աջակցող պարագա): Եռամսյակի ընթացքում ՄՍԾՏԿ-ից ձեռք է բերվել թվով 42 շահառուների համար անապահովության միավորների տեղեկանք՝ դեղերի ստացման. բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու համար և այլն: Թվով 21 շահառուների համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում, սոցիալական աշխատողը թվով 13 շահառուի միջնորդել և ուղղորդել է միասնական սոցիալական ծառայություն՝ օժանդակ պարագաների /օրթոպեդիկ կոշիկներ, սայլակ, արմնկային հենակներ, քայլակ, ձեռնափայտ և այլն/ ձեռք բերման նպատակով, կենսաթոշակի վերահաստատումը կազմակերպելու նպատակով, ինչպես նաև տրանսպորտից օգտվելու համար քարտի ձեռք բերման նպատակով, թաղապետարանից սննդի և հիգիենիկ փաթեթներ ստանալու նպատակով և այլն: Թվով 1 շահառու ուղեկցվել է անձնագրային բաժանմունք՝ նոր անձնագիր ստանալու նպատակով և այլն:

  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 55 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, 34 շահառու հետ իրականացվել է անհատական հոգեբանական խորհրդատվություն. որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել են միջոցառումներ. համերգներ. էքսկուրսիաներ. որոնց մասնակցել են թվով 13 շահառու:

  Իրականացված միջոցառումներն են

- ✓ Ծննդյան օրերի նշում (2 շահառուի 70 ամյակ)
- ✓ Համերգներ «Արամ Խաչատրյան» համերգասրահում
    - o Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ,
    - o Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ,
    - o Հայաստանի պետական կամերային նվագախումբ,
    - o Հեռուստատեսության և ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախումբ,
    - o Ղազախստանի մշակութային օրերը Հայաստանում՝ Ղազախական պարի համույթ,
    - o Ա. Խաչատրյանի անվան 21-րդ միջազգային Դիրիժորների մրցույթներ:
- ✓ Էքսկուրսիաներ
    - o Դեպի Գյումրի, որի ընթացքում այցելել են Հովհաննես Շիրազի, Մհեր Մկրտչյանի, «Ձարս ու շիտակ» թանգարաններ և Յոթ Վերք եկեղեցի.
    - o Դեպի ք.Էջմիածին «Սուրբ Հռիփսիմե» եկեղեցի և «Մայր Տաճար»,
    - o Դեպի Գեղարդի վանական համալիր և Գառնու տաճար:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 178 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման. սննդի կազմակերպման. բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման. անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, գերեզմանի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 178 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը, բժշկական մասնագիտական խորհրդատվություն է տրամադրվել:
Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 99 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշակական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 38 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 26 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, 54 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 29 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 4 շահառուի համար կատարվել է երակային ներարկում, 3 շահառուի նոր լնդգրկվել են տարածքային պոլիկլինիկա: Թվով 23 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 42 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնում դեղատոմսով, 31 շահառուի համար պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 26 շահառուի համար կատարվել է վերքի մշակում, վիրակապում (շարունակական), 6 շահառուի տրվել է սակդիր, 7 շահառուի համար հիվանդանոցից վերցվել է էպիկրիզ, 15 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերցիններից հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

- **Այլ ծառայություններ**
***Հումանիտար օգնության բաշխում***
Արաբկիր վարչական շրջանի կողմից տրամադրված սննդամթերքի և հիգիենիկ պարագաների փաթեթներ է բաշխվել տնային խնամքի ծառայություններ ստացող թվով 25 շահառուների:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

1. Էքսկուրսիա ք.Էջմիածին «Սուրբ Հռիփսիմե» եկեղեցի և «Մայր Տաճար» (տե՛ս հետևյալ հղմամբ [https://surli.cc/izljgr](https://surli.cc/izljgr)):
2. Էքսկուրսիա Գեղարդի վանական համալիր և Գառնու տաճար (տե՛ս հետևյալ հղմամբ [https://surli.cc/izljgr](https://surli.cc/izljgr)):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Համապատասխան տարածքները սպասարկող սոցիալական աշխատողները մասնակցել են Նոր Նորք, Ավան, Նուբարաշեն, Քանաքեռ-Զեյթուն եւ Արաբկիր ՄՍԾՏԿ-ների խորհրդատվական նիստերին:
- ✓ Նոր Նորք եւ Ավան համայնքները սպասարկող թիմերի Սուպերվիզորը մասնակցել է
    - o առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) դասընթացին
        - ▪ Թեմա «ՖՄԴ հասկացությունը», Ապրիլի 11-12 2025թ: Դասախոս՝ Դոկտոր Ռոքսան Մարիցը:
        - ▪ Թեմա Վերականգնողական ծառայությունների ներկայացում տարեցների համար, ուղղված կարծիքների հավաքագրում SwissMOU, ինչպես նաեւ վերականգնման եւ առողջ ծերացման հետ կապված հետազոտական հարցերի մշակում: Մայիս 23 - 2025թ:
    - o Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումներին:
    - o Հայաստանում Յունիսեֆի գրասենյակի աջակցությամբ՝ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակում կազմակերպված քննարկմանը

        - Թեման ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկվող «Սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման կարգը, պայմանները, հավաստագրի կասեցման, ինչպես նաև հավաստագրված անձանց ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նոր նախագիծը (փոփոխությունը բխում է 2024 թվականի նոյեմբերի 14-ին ուժի մեջ մտած «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի պահանջից):
    - Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար համայնքահեն խնամքի և աջակցության ծառայությունների քարտեզագրումը:
    - Կամրջելով բացերը՝ հոգեկան առողջության ծառայություններին համընդհանուր հասանելիության ապահովում" խորագրով «Աշխարհի Բժիշկներ» կազմակերպության հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության համաժողովին:
- ✓ «Նունենի» ՀԿ թիմի պատասխանատու առցանց մասնակցել է
    - «Կաթոլիկ Օգնության ծառայություններ» /CRS/-ի կողմից կազմակերպված «Նախագծերի կառավարում» վերապատրաստման դասընթացին:
    - Ծաղկաձորում իրականացվող «Հավասարություն և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ՖՄԴ գործիքակազմի կիրառման վերաբերյալ վերապատրաստման դասընթացին:
- ✓ Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջանների սոցիալական աշխատողները «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում» մասնակցել են «Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց /ընտանիքների/ սոցիալական գնահատում և սոցիալական ծառայությունների տրամադրում» 5 օրյա դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 175/177 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 157 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 12 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 8 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 12 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 165 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *Նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –4<br>Բ –173 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 178 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 178 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 178 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 13 |
| 6. | խորհրդատվական օգնություն /Իրավաբանի խորհրդատվություն/ | 25 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>հոգեբանական խորհրդատվություն | <br>55 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Միքայելյան*___ «07» 07.2025թ